

որհնելով զՁեզ, զվաստակս և զմեղուաջան աշխատանո Ձեր, մաղթեմք ի Տեառնէ պարզեել Ձեզ առողջութիւն և երկարակեցութիւն գասն ազգօգուտ զործունէութեան, պահպանել և զօրացուցանել զՁեզ ի հայրենասիրութեան, յազգասիրութեան եւ ի զորդս բարիու:

Ալջ լեբուք, զօրացեալ չնորհօք Առուբը Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի մէնջ, ամէն: Վշտալի Գիլրիդ Ե. ԿԱՅԹՈՂԻԿՈՍ ԵԽ ՆՍՅՐՈԳՈՅՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ:

Ի 4 Նոյեմբերի, 1928 ամի,

ըստ տոմարիս ԱՅՃՀ,  
ի Հայրապետութեան մերում Ամ. Հայոց  
Ժի ամի,  
ԴՅԱՐԱՐԱՏԵԱՆ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի,  
ի Վաղարշապատ:

Թ. 517

## ԿԱՅԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՅ

### ԿԱՅԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ԵՒ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ ԱՆԹԻԼԻԱՄԻ ՄԷՋ

1915-էն ի վեր կիլիկիոյ կաթողիկոսութիւնն ալ, Թիւրքիոյ բովանդակ հայութեան հետ, զրկուած իր բոլոր բնիկ, հաստատուն և պատմական զիւրութիւններէն, եղաւ թափառական և բարբարական, եւ վէհափառ ու ալեփառ Ասհակ Ս. Կաթողիկոսը չկորսնցուց իր հաւատքը, վերակազմելու համար իր Աթոռը կաթողիկոսարանով և ուսումնաբարանով:

Քանի որ Սիւրբիոյ ասպնջական հոգին վրայ համախմբուած էին բիւրուոր Հայեր կիլիկիայէն և հայաբնակ ուրիշ քաղաքներէն, հարկ անհրաժեշտ էր այդ ըրջանակին մէջ կազմակերպել ամէնէն յառաջ կաթողիկոսական թեմը. և այս առաջին քայլը յաջողեցաւ յաւէտ ողբացեալ Ամեն. Դուրեան Եղիշէ Ս. Պատրիարքին իմաստուն կարգադրութեամբ և Ս. Յակոբայ Պարմէն. Միաբանութեան բարեհացակամութեամբ, որուն հետեւանքով Երուսաղէմի Աթոռին հօգևոր իրաւասութիւնը Պերութի, Շամի և Լաթաքիոյ ըրջանակներուն մէջ, փոխանցուեցաւ կիլիկիոյ Աթոռին, և վեհ. Ասհակ կթզս. կարող եղաւ ստեղծել առաջնորդական երեք նոր թեմեր, ու-

րոնք աւելինալով արգէն կիլիկիոյ Աթոռին պատկանող Հալէպի և Կիպրոսի թեմերուն վրայ, հինգ թեմեր կազմակերպուած եղան եպիսկոպոսական աթոռներով:

Երկրորդ առնելիք քայլն էր Կաթողիկոսարանի համար համար հաստատուն տեղ մը գտնել:

Հալէպի՛ն էր կաթողիկոսանիստ քաղաք ըլլալու իրաւունքը. որովհետեւ սկիզբէն ի վեր Սիւրի հետ և անոր հաւատքը զիւրք ունեցաւ Հալէպ: Թէ կիլմայի և թէ քաղաքական պատճառներով մանաւանդ կիլիկիոյի կաթողիկոսները Հալէպ կը նստէին յաձախ, այնպէս որ Հալէպի Քառոսուն Մանկունք եկեղեցին տեսած է կաթողիկոսական և եպիսկոպոսական ձեւնադրութիւններ և օծումներ, սրբալոյս Միւսոնի օրհնութիւններ, իսկ բուն մատուոը՝ Քառասուն Մանկանց այդ եկեղեցւոյն մէջ՝ եղած է նաև գամբարան կաթողիկոսներու և եպիսկոպոսներու: Բայց 1915-էն ետքը, Սիւրբիոյ մէջ քաղաքական պայմաններու նորագոյն զասաւորման հետեւանքով Պերութի խլեց առաջնութիւնը՝ դառնալով բովանդակ Սիւրբիոյ հօգատար կառավարութեան կեղրոն, ինչպէս նաև Լիւտնանի հանրապետութեան մայրաքաղաք, և Հալէպ մնաց ետեւ, թէև ամէնէն մեծ հայտնակ քաղաքն է:

Սիւրբիա իսկապէս կրօնական երկիր մըն է բազմաթիւ յարանուանութիւններով, որոնց բոլոր հօգեսոր պետերը Պերութին հաստատած իրենց Աթոռները. և իրերու բնական բերմունքով կիլիկիոյ Աթոռն ալ պիտի հաստատուէր Պերութ, և ասիւկա փափաքն էր նաև Բարձր Թօմիսէրութեան: Բայց Պերութի մէջ չը կար յարմար տեղ կաթողիկոսարան ընելու համար:

Անթիվասի մէջ Նիյր Խարի որբանոցի շէնքերուն կիլիկիոյ կաթողիկոսութեան սրբազգրութիւնը հնարաւորութիւն տուաւ վէհ. Ասհակ կթզին. որ կաթողիկոսարանն ալ կազմակերպուի հոն իր ուսումնաբանին հետ:

Անթիվասի շէնքերը կիլիկիոյ կաթողիկոսութեան արամագրող պայմանագրութիւնը ստորագրուեցաւ Պերութի մէջ, 1930 Ապրիլ 7-ին, Նիյր Խաթի Քարտուղար Մը. Պարքէյ Եշիսընի և կիլիկիոյ Վէհ. Ասհակ կաթողիկոսի կողմէն, զայն իրեն

զիայ ստորագրեցին նաև Բարգէն Եղիշիս կոպոս, Մր, Մարչ և Լևոն Զէնեան:

Պայմանագիրը անզլիւրէն է և կը բաղկանայ ութը յօդուածներէ, որոնցմէ կ'ամփոփենք հետեւալիները:

Յօդ. 2. Վարձակալութիւնը հինգամեայ է, 1930 Յուլիս 1 էն մինչև 1935 Յուլիս 30: Եթէ վարձակալը ուզէ երկարել այս պայմանաժամը, պէտք է որ իր փափաքը յայտնէ այդ մասին, ապահովագրեալ նումակով մը, պայմանաժամին լրանալէն երեք ամիս յառաջ:

Յօդ. 3. Վարձակալը կը խոստանայ որ չէնքիրը բացարձակապէս պիտի զործածուին կաթողիկոսարանի և դպրոցի համար, ուր պիտի պատրաստուին եկեղեցականներ և ուսուցիչներ, հետեւալ պայմաններով.

ա) Դպրոցը պիտի վայելէ օժանդակութիւնը Յանձնաժողովի մը որ կազմուած է նիւ Եսորքի մէջ նիյր Խօթի և Ամերիկայի Հայոց ներկայացուցիչներէ:

բ) Դպրոցին վերատեսութը և ուսուցչական մարմինը պիտի նշանակուի վեհ. Կաթողիկոսի կողմէն և պիտի հաստատուի նիւ Եսորքի Յանձնաժողովի կողմէն:

գ) Երկու կողմէն կ'որոշեն դպրոցը բանալ յառաջիկայ աշնան:

Յօդ. 4. Դպրոցի բացումին յառաջ անոր վարչական մեթոդին, առարկաներուն և ուսմանց ծրագրին համառոտ մէկ վաւերագիրը պիտի պատրաստուի ն. Ս. Օծութեան Ահանկ կթզի. կողմէն, խորհրդակցութեամբ Աթոռակից Գեր. Տ. Բարգէն Եպօսի., Գեր. Շահէ Ծ. Վրդ. Գասպարեանի, և պիտի զրկուի վերոյիշեալ Յանձնաժողովին:

թէ չէնքիրու դործածութեան, թէ նիւ Եսորքէն ապահովուած նիւթական օժանդակութեան տեսականութիւնը կախուած է ծրագրին համեմատ ձեռք բերուելիք արդիւնքէն և ազդուութենէն:

Յօդ. 5. Տարեկան վարձքը մէկ առւար է:

Յօդ. 6. Վարձակալը պարտաւոր է լւա վիճակի մէջ պահել կալուածը. ոչ մէկ ժառ պիտի կարուի, ո՛չ առ ուեկ փոփոխութիւն պիտի կատարուի չէնքիրուն վրայ առանց կալուածատիրոջ հաւանութեան:

Յօդ. 7. Վարձակալը իր վարձակալութեան շրջանին պարտաւոր է վճարել

կալուածատուրքը, ինչպէս նաև զոհացում տալ կառավարութեան կոմ քաղաքապետութեան պահանջներուն:

Յօդ. 8. Վարձակալը կրնայ ապահովագրել կալուածը:

Ինչպէս որ կը տեսնուի այս ամփոփումէն, նիյր Խար Ռըլիքը, որ այժմ եղած է նիյր Խար Ֆատունիշըն (Հմբեմարկութիւն Մօտաւոր Արեւելքի), բացարձակապէս բարեացամ և անշահախմնպիր ոգիսով կը գործակցի Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին, որպէս զի ն. Ս. Օծութիւնը կարենայ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը կազմակերպել լրջորէն, կեղրոն զարձնելով զայն պատրաստութեան հայ եկեղեցականներու եւ հայ ուսուցիչներու. Երկու զիսաւոր գործօն ուժեր, որոնց պէտք ունի Ախորիոյ հայութիւնը:

Սիւրիոյ մէջ բոլոր յարանուանութեանց եկեղեցական և կրթական կազմակերպութիւններուն կեղրոնն է Խրաքանչիւրին հոգեոր իշխանութիւնը:

Եւ մեր այժմեան վիճակին մէջ ալ ա՛յս պէտք է բլայ ո՛չ միայն Սիւրիոյ մէջ՝ այլ նաև Երոսովայի և Ամերիկայի մէջ(\*):

Ապահովութեան և փրկութեան միակ ձամբան Հայ եկեղեցին է, հայը հա՛յ պահելու համար բոլոր զաղթավայրերու մէջ:

Յուսովի հնք որ քիչ տաենէն Անթիլիաս պիտի զառնայ հոգեոր և մտաւոր կրթութեան վառարան մը:

Դպրոցը, որ պիտի բացուի այս աշնան, պիտի վայելէ Գեր. Շահէ Ծ. Վարդապետի կորովն ու խնամքը:

Շահէ Վրդ. Դպրուվանքի կարող վարդապետներէն մէկն է: Դուրեան Սրբազն մասնաւոր համականք կը տածէր հանգեցէ Վարդապետի, որուն վերատեսուչ նշանակուիլը Անթիլիասի զպրոցին մնձ հրճուանք պատճառեց իրեն, այնպէս որ փափաքեցա անձամբ տեսնել իր աշակերտը երաւաղէմի մէջ: Շահէ Վրդ. ուշ հասաւ երուսաղէմ, լալու համար իր սի-

(\*) Երուախոյ հայ զաղութերու կազմակերպութեան համար ալ Ամենայն Հայոց կաթողիկոսին լիազօր պատուիրակ Թորոսմ Արքազան մեզմէ անկախարար միեւնոյն կարծիքը յայտնած է իր տեղեկագրին մէջ, որ ճրատարակուեցաւ Սիսնի այս թիւերուն մէջ:

րելի ուսուցչին գերեզմանին վրայ և հա-  
զիւ հինգ օր, Յուլիս 17-22, կրցաւ մեաւ  
Ս. Յակոբի մէջ հարկ եղած խորհրդակցու-  
թիւնը կատարելու համար Բարդէն Արքա-  
զանի հետ Անթիլիասի զպրոցի ուսմանց  
ծրագրին և թեկնածուներու ընտրութեան  
և ընդունելութեան պայմաններու մասին:

Գեր. Շահէ Վարդապետ 48 տարեկան  
է այժմ. հաւատքի և համազումի մարդ է:  
Բոլորովին անձանօթ չէ իրեն սիւրիական  
միջավայրը, Ամերիկա երթալէ յառաջ Հա-  
յէպի մէջ փարած է առաջնորդական պաշ-  
տօն և այնչափ գոհ եղած է ժողովուրդը  
որ մինչև հիմայ զրուատիքով կը յիշա-  
տակուի իր գործունէութիւնը Հալէպի մէջ:

Ամերիկայի մէջ անցուցած իր 17 տա-  
րիներուն առաջին երեքը նուիրեց իր ու-  
սումը կատարելազործելու Պոստոնի կից  
Քէյպրիճի Աստուածաբանական զպրոցին և  
Հարվըրտ համալսարանի մէջ: Յայոյ 14  
տարի շարունակ վարեց Պոստոնի նման  
լայնածաւալ թեմի մը հոգեոր հոգուու-  
թիւնը, և իր ջանքերուն շնորհիւ է որ Պոս-  
տոն ունեցաւ իրեն սեպհական եկեղեցին,  
որուն կշնոր քիչ ատենէն զգալի եղու  
Պոստոնի թեմին հայ կեանքին զործառ-  
նութեանց մէջ:

Գեր. Շահէ Վարդ. ամէն յարմարու-  
թիւն և կարողութիւն ունի վերատեսչի  
բարձր պաշտօնը արժեցնելու Անթիլիասի  
զպրոցին մէջ և առաջնորդելու այն երի-  
տասարդներուն, որոնք քիչ ատենէն պիտի  
համախմբուին հոն՝ սորվելու և պատրաստը-  
ւելու համար իրենց Մայրէնի Եկեղեցւոյն  
և ազգային զպրոցին ծառայութեան:

Ինչպէս երբեմն Ծամնջաւ մը ասպնջական  
եղաւ Հայոց կաթողիկոսական աթոռին,  
Բիւզանդական կայորութեան քիչ շատ ա-  
պահով և սակայն օտար սահմաններուն  
մէջ, այժմ ալ Անթիլիաս մը կը հիւրընկա-  
լէ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը օտար մի-  
ջավայրի մը մէջ, յաւիտենական լիքանաւ-  
նու ստորոտը, Հայոց համար շատ բար-  
եացակամ կառավարութեան մը շրջանա-  
կին մէջ, և ֆուանսայի նման լուսաւոր  
պետութեան մը հոգատար հովանիին տակ,  
հոն գտնելով ապահով կուռւան մը՝ վերա-  
կազմելու համար իր հոգեոր-վարչական  
յօրինուածքը և իր զպրոցական գործը:

## ՄԱՆ

## ՊԱՏՐԻԿ Էֆ. ԿԻՒԼՈՒԵՆԿԵԱՆԻ

Դուրեան Արքազանի պէս Պատրիկ Կիւլ-  
պէնկեան ալ զոհ զնաց զաժան և զաւա-  
ճան հիւազութեան մը, երբ յոյսեր և հա-  
ւանականութիւններ կային երկուքին ալ  
կեանքին երկարութեան համար:

Կիւլպէնկեան տասը աարիներէ ի վեր  
կը նեղուէր զժուարամեզութենէ, բայց ա-  
ռողջապահնիկ պայմաններով կը կարծէր զի-  
մազը ել վանագին, զոր նկատի ասնելով  
Փօթ. Մարփօն խորհուրդ կուտար իրեն  
որ զործողութեամբ առաջքը առնէ բար-  
զութիւններու: Կիւլպէնկեան չուզեց յանձ-  
նուիլ նշգրակին, բայց յիտոյ ստիպուե-  
ցու տեղի տալ զիտութեան պահան-  
չին: Մայոս 19-ին մոտաւ նիւ Եօրքի Փօթի-  
լինիի հիւանդանոցը, եւ յաջողութեամբ  
անցաւ առաջին զործողութեան մէջէն: Յու-  
նիս 9-ին կատարուեցաւ երկորորդ զործո-  
ղութիւնը նոյնքան յաջողութեամբ, բայց  
Յունիս 12-ին վատթարացաւ իր զիճակը  
և հակառակ զիտութեան բոլոր ճիբերուն  
և ընտանեկան անձնուէր խնամքներուն՝  
մահը զազրեցաց ապրելէ թանկագին կեանք  
մըն ալ:

Կիւլպէնկեան անունը իր հարստութեան  
համար չէ որ սիրուած է հայ ժողովուր-  
զին մէջ: Այդ անունը ազնուական աւան-  
դութեան մը մարմնացումն է. Ներշնչում  
մը՝ որ կ'ոզեսրէ, պարձանք մը՝ որով հայ  
ժողովուրզը կրնայ հպարտանալ: Կիւլ-  
պէնկեանք, իրենց ծագումով ազնուական,  
իրենց աշխատութեամբ անզուգական, ի-  
րենց սիրու յարստմովը իրենց ազգին և ի-  
րենց Մայրէնի Եկեղեցւոյն՝ օրինակելի, ա-  
ռութական մարզի մէջ կանուխին ծաւա-  
լուն և օծուն համբաւ շինեցին՝ իրենց ճեռ-  
ներէց, հեռատես և ուղղամիտ զործառ-  
նութիւններով:

Փոքր Ասիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ  
զործակալութիւններ ունէր Կիւլպէնկեան  
Տունը: Երկրի առեւտրական ապրանքներուն  
մէծ մասը (բուրդ, պրօն, մորթ, ճահրի,  
խէժ քիթը) ափիոն, արմտիք, եւայլն,  
եւայլն) Կիւլպէնկեան Տան միջոցով կը փո-  
խազրուէին Եւրոպա: Աերովէ և Մարգիս